*ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

***2017թ. I եռամսյակի ընթացքում ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեության վերաբերյալ***

2017թ. I եռամսյակի ընթացքում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից որոշակի աշխատանք է կատարվել համակարգին վերապահված խնդիրների իրականացման ուղղությամբ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 28 առևտրային և 6 ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 67-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), իսկ 3-ի գործունեությունը դադարեցվել է: 1 իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում ենթարկվել է պետական հաշվառման, 1-ը՝ ընթացիկ պետական հաշվառման, իսկ 1-ը հաշվառումից հանվել է: 1 հիմնարկ ենթարկվել է ընթացիկ պետական հաշվառման:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև 250 անհատ ձեռնարկատեր, 22-ը՝ ենթարկվել ընթացիկ պետական հաշվառման, իսկ 7-ի գործունեությունը դադարեցվել է:

Ըստ շրջանների գրանցման գործընթացի իրավիճակը բնութագրվում է հետևյալ կերպ.

| անվանում | իրավաբանական անձ | | | | իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ | | | | անհատ ձեռնարկատեր | | | | ընդա-մենը | պետ. տուրք (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | սկզբ | վերագ. | ընթ. | լուծ. (դադար.) | սկզբ. | վերահ. | ընթ. | լուծ | սկզբ. | վերահ | ընթ. | գործ. դադար | | |
| *Կենտրոնական մարմին* | 7 | | 9 | 1դ | | | 1 | | | | | | 18 | 133 |
| *Ստեփանակերտ* | 19 | | 45 | 1 | | | 1 | 1 | 141 | | 17 | 4 | 229 | 1042,5 |
| *Ասկերան* | 2 | | 3 | | | | | | 24 | | 1 | 3 | 33 | 124,5 |
| *Հադրութ* | | | 2 | | | | | | 19 | | | | 21 | 69 |
| *Մարտակերտ* | 2 | | 1 | | | | | | 21 | | | | 24 | 103 |
| *Մարտունի* | | | 5 | | | | | | 29 | | 1 | | 35 | 116,5 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Շուշի* | 3 | | | 1 | | | | | 11 | | 2 | | 17 | 87 |
| *Մաշաթաղ* | 1 | | 2 | | 1 | | | | 5 | | 1 | | 10 | 55,5 |
| *Ընդամենը* | 34 | | 67 | 3 | 1 | | 2 | 1 | 250 | | 22 | 7 | 387 | 1731 |

Պետական միասնական գրանցամատյանից տրվել է 110 տեղեկանք:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 1 841 000 դրամ պետական տուրք:

Գործակալության կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում I եռամսյակում արտաբյուջե է մտցվել 211 000 դրամ:

Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել սպառիչ պատասխաններ:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից սիստեմատիկ հսկողություն է իրականացվել պետական ռեգիստրի տարածքային բաժինների նկատմամբ, նրանց տրվել են ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ:

Գործակալության պետ՝ Գ.Մաքսիմովա

Կատարող՝ Ի.Առստամյան